1595–6. Թվ. ՌԽԴ. Թուրքի խոնտիքարն սուլթան Մուրատ մեռաւ. և փոխանակ նորա նստաւ ի թագաւորութիւն որդին իւր սուլթան Մահմատ. 21 ամ թագաւորեաց Մուրատն։

1595–6. Թվ. ՌԽԴ. ԶՕլախի պարոն զՀարոն՝ հանին ի պարոնութենէ, և կապանօք տարան ի Մաճարք։

1595. Թվ. ՌԽԴ. Յունիսի Ա. Բարեպաշտ թագաւորին մերոյ Զիկմունդին որդի ծնաւ, և մեծ ուրախութիւն եղեւ այս Իլախաց աշխարհն, վասն որոյ մեծ ուրախութիւն և ցնծութիւն և անբաւ խնդութիւն կատարեցին։

1595–6. Թվ. ՌԻԴ. Կամենից քաղաքս նոր եպիսկոպոս եկաւ, անուն՝ ԳԺօնց Բաւէլ Վոլուցքիյ։

1595–6. Թվ. ՌԽԴ. Ի յայսմ ամի խազախ մտան Թուրքի յաշխարհ. մեծ և բազում վնաս գործեցին. զմարդիկն ի սուր մաշեցին, զերկրի բարութիւն՝ զարջառ և զոչխար և զամենայն ինչ աւար առին. և էր գլխաւորք նոցա Լոպոտայ և Նալիվայքո. զոր յետոյ Նալիվայքո ի Մաճարք փախաւ խազախներով իւրով։

1595–6. Թվ. ՌԽԴ. Ի յայսմ ամի թագաւորն մեր Զիկմունդ հեծել զրկեց ոչ բազում ինչ՝ այլ իբրեւ հինգ վեց հազար, և էր գլխաւոր զօրաց քանցլէր Բան Զամոյքի. զոր եկեալ մտան ի Օլախաց երկիր, և հասին մինչեւ ի Ան. և էր անդ ոմն գոռոզ Բըզվան անուն իշխան երկրին Օլախաց, փոխանակ Հարոն պարոնին. իբրեւ լուաւ զգալուստն քանցլերին և զօրաց իւրոց, վաղվաղակի փախստական գնաց ի Մաճարք. և քանցլէրն էառ զերկիրն ընդ ձեռամբ իւրով, և նստաւ երեք ամիս ի Ցոցորան (գիւղ ի վերայ Բրութ գետոյ). և կացոյց զոմն Երեմիայ անուն ի պարոնութիւն երկրին վերայ. ուր և հնազանդեցան նմա երկիրն ամենայն։ Եւ յետ սակաւ աւուրց եկն Թաթրի խանն բազում զօրաք, զոր ոմանք ասէին եթէ 80,000, հրամանաւ պիղծ և անհաւատ? քարին, և կամէր պատերազմել ընդ նոսա։ Իսկ սոքա, այսինքն է Քանցլէր և ամենայն զօրքն իւր զինեցան և քաջացան, պատրաստեցան աստուածային օգնականութեամբ. մարտեան ընդ նոսա և կոտորեցին զնոսա ոչ բազում ինչ, այլ իբրեւ չորս հինգ հազար։ Իբրեւ եւ տես պիղծ և անհաւատ Թաթրի խանն որ յաղթեցաւ, յետս չոգաւ. և սկսաւ հրեշտակութիւն առաքել զի հաշտեսցի ընդ նմա. զոր և քանցլէրն հաւանեալ՝ հրամայեաց Թաթրի խանին զի եկեսցէ առ նա, և դէմ յանդիման խօսեսցի ընդ նմա. զոր եկեալ մեծաւ երկիւղիւ և դողութեամբ՝ խաղաղութիւն հաստատեց, և երդուաւ. ուխտ և դաշինք եդին ընդ միմեանս, զի մի՛ այս Իլախի երկիր սուր չքաշէ և ոչ աւիրէ, որպէս յառաջագոյն հանապազ եկեալ աւար առնէին և գերի վարէին, հրձիգ առնէին։ Յետ այսորիկ դարձաւ և գնաց. և քանցլէր եկն յաշխարհն իւր։ Բայց է այս մեծ և զարմանալի պան-